ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
Շինարարական նյութերի /ներկ, նախաներկ/ ձեռքբերման
գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 26.09.2018 ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ավետիսյանը

Անդամներ՝ Հ. Հարությունյանը

Ա. Գաբրիելյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Կաբասակալյանը

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ 22,08,2018թ. հարցում է ուղարկվել «ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած «Սոլեր» ՍՊԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը /կցվում է/:

1.2 Գնահատող հանձնաժողովի 19.09.2018թ. թիվ 2 որոշմամբ, ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Սոլեր» ՍՊԸ–ից eauction.armeps.am համակարգով էլեկտրոնային եղանակով պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ «Սոլեր» ՍՊ ընկերության կողմից eauction.armeps.am համակարգով և էլեկտրոնային փոստով ներկայացվել են /կցվում են/:

2.2 Կարգով սահմանված ժամկետում Կոմիտեից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ստացվել է դրական եզրակացություն /կցվում է/:

3. Հանձնաժողովը որոշեց.

3.1 Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Սոլեր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.2 Ընտրված մասնակից ճանաչել 1 և 2 չափաբաժիններով «Սոլեր» ՍՊ ընկերությունը

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Ավետիսյանը

անդամներ՝ _____ Հ. Հարությունյանը

_____ Ա. Գաբրիելյանը

քարտուղար՝ _____ Է. Կաբասակալյանը